

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցւումով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նաւագնացութիւն եփրատի վրա. Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենագրութիւն.
Հայոց Թատրոն. Նամակ եւ արտադրութիւն.
Նամակ եւ արտադրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ—
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ—
ՐԱԿԱՆ. Յուդայանդէս Ռիգայում.

ՆԱԽԱԳԵՏՈՒԹԻՒՆ ԵՓՐԱՏԻ ՎՐԱ

Փորը-Ասիայում երկաթուղիներ շինելու
հարցին հետ միասին առաջ է եկել և նա-
ւագնացութեան հարցը: Վանայ լիճը, Եփ-
րատ գետը և ուրիշ մեծ աւազաններ կա-
րող են մեծապէս օգնել նաւագնացութեան
միջոցով ներքին հաղորդակցութիւններ
հաստատելու երկրի մասերի մէջ:

Ճիշդն ասած՝ այդ հարցը նոր չէ և մի
բանի անգամ է նա յարուցված, բայց ա-
մեն անգամ մոռացութեան է մատնե-
վել և անպարտապէս վերացել: Իսկ այժմ,
երբ Փորը-Ասիան սկսում է ենթարկվել
արևմտեան եւրոպայի գրամագլուխների
ազդեցութեան, երբ հերթական է դար-
ձել հաղորդակցութեան ճանապարհ-
ներ շինելու հոգը, այդ հարցը ստանում
է առանձին հետաքրքրութիւն և մտնում
է գործնական խորհրդածութիւնների շը-
ջանը:

Վանայ լճի վրա նաւագնացութիւն հաս-
տատելու հարցը երբեք չէ ենթարկվել
լուրջ կասկածի: Նաւագնացութիւն հաս-
տատելու հարաւոր է բոլորովին Միայն
անհրաժեշտ են կարգին ձեռնարկողներ
և որոշ գրամագլուխ: Այդ լճի վրա այժմ էլ
տեղի ունի բեռնակրութիւն, բայց նա
կատարվում է նահապետական ձևերով:
Չէ կազմակերպվել կանոնաւոր և ընդար-
ձակ հաղորդակցութիւն լճի բոլոր ափերի
մէջ: Անկասկած լճի առանձնայատկու-
թիւնները, նրա մի քանի ափերի գոտարա-
մատելի լինելը, քամիների ոյժը և նրանց
ուղղութիւնը պէտք է ստիպէ նաւագնա-
ցութիւն հաստատողներին ուսումնասիրել
այդ բոլոր պայմանները, բայց դրանք երկ-
րորդական հանգամանքներ են և գործնա-
կանապէս հեշտ լուծելի:

Աւելի դժուար էր եփրատ և միւս գե-
տերի վրա նաւագնացութիւն հաստատելը,
որովհետեւ գետերը որոշ տեղերում արագ
հոսանք ունեն, կատարում են շատ սուր

պտոյաններ և անցնում են վտանգաւոր
ժայռերի ու քարերի մօտով: Նորերս եր-
կու ամերիկացիներ՝ պաշտօնական անձեր
Փորը-Ասիայում, փորձեցին իրանց շինած
նաւով ճանապարհորդել եփրատի վրայով
և եկան այն եղանակացութեան, որ այդ
գետի վրա նաւագնացութիւն հաստատելը
շատ հեշտ իրադրութիւն մի բան է: Բաւա-
կան է մի երկու տեղ գետի հունը և ա-
փերը բարեկարգել, որպէս զի կարելի լի-
նի հաստատել կանոնաւոր նաւագնացու-
թիւն այդ գետի վրա մեծ տարածութեամբ:
Շողիւնաւային հաղորդակցութիւն հաս-
տատելը կենցեղ կը ներշնչէ գետեղբայ-
րներին, որոնք չը նայելով իրանց զիւր-
բին, մինչև այժմ զրկված են հաղորդակ-
ցութիւններից ուրիշ տեղերի հետ և ներ-
կայացնում են մի տեսակ խուլ անկեղծութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մայիսի 20-ից Թիֆլիսի պարբերական մա-
մուլի վրա աւելցաւ մի նոր օրգան: Այդ օրը
հրատարակվել «ԱրճճԱՅԻՆ» ռուսերէն չափա-
թափերով անունով համարը: «ԱրճճԱՅԻՆ»-ը
պիտի հրատարակվի կիրակի օրերը, դա փո-
րագիր, 16 երեսանոց մի պատկերազարդ
թերթ է, որ ունի ամենօրեայ յաւելումներ
«Ежедневникъ Арддайна» անունով: Ամեն-
օրեայ յաւելումներն մէջ ազգայնութիւն են հե-
ռագիրներ և յայտարարութիւններ, այնպէս
որ չարթաթափերով բաժանորդը իւրաքանչիւր
օր կը ստանայ մի ամենօրեայ լրագիր այն բա-
ժինը, որ բաղկացած է լինում հեռագիրներից
և յայտարարութիւններից: Առաջին համարի
խմբագրական յօդուածում այսպէս է որոշվում
նոր չարթաթափերի ուղղութիւնը:

Մեր գործունէութեան մէջ ղեկավարող
սկզբունքը կը լինի ձգտում՝ ճշմարիտ կեր-
պով արտացոլել կենսական երեւոյթները,
չենթարկվելով հասարակական այս կամ այն,
զուրկ փայտական արամադրութեան: Լա-
յնիւրով, որ եւլ արծարծում է կրքերի
կրակը, նա հանգչում է բանականութեան
լոյսը, մինչև կայսրատեղ պահպանել պատ-
շաճաւոր անկողնապահութիւն զանազան
կուսակցութիւնների շահերի նկատմամբ և
մեր ընթերցողների ուշադրութիւնը կը դարձ-
նենք զիստաբարպէս այն բանի վրա, ինչ
բարձր է կուսակցական կոնկրետից և երկ-
պառակութիւններից, այն է՝ հասարակու-
թեան և պետութեան ընդհանուր և ամեն-
քին հասարակապէս մօտիկ շահերի վրա:

Յուդայանդէսը տեղաւորվում է քաղաքի
կենտրոնում, Էսպլանադա կոչված մեծ հրապա-
րակի վրա և մօտակայ պարտէզում (Schüt-
zengarten): Շինութիւնների մէջ աչքի է ընկե-
լում «Հին-Րիգան» (Alt Riga) ջրանցքի ա-
փում, Նէյման և Րէյնբերգ ճարտարակա-
ների պրոէկտի արտադրութիւնը: Նա միջնա-
դարեան քաղաքի մի անկիւն է իր աշտարակ-
ներով, եկեղեցիով, հին-գերմանական գինե-
ւաներով, գարեջրատներով և նկարիչների կու-
ռով, որտեղ զուգահեռեալ ժամանակ ղեմա-
կանանդէսներ են լինելու: Ջրանցքի միւս ա-
փը պատկերացնելու է Վենետիկը իր յայտնի
գոնդոլներով: Այստեղ երգելու են իտալական
երգիչներ:

Չուարձակ մասը կազմված է բաւական
հոգաբար կերպով Յուդայանդէսում միաժա-
մանակ նուազելու են 3-ից ոչ պակաս երա-
ժշտական խմբեր, Կառավարչական կոմիտէին
աղըզվել է հրաւիրել Ֆինլանդիայից Հէլսինգ-
ֆորսի յայտնի ֆիլարմոնիական օրկեստրը, պ-
Շնէֆօզդի ղեկավարութեամբ: Մի ուրիշ օր-
կէտար կառավարելու է պ. Գլավալը:

Յուդայանդէսը տեղաւոր է 3 ամիս, յունիսի
1-ից մինչև օգոստոսի վերջերը: Տարրական
դպրոցների շինութեան մէջ՝ որոշված է բա-
նալ նաեւ տեղական նկարիչների զուգահե-
ռէսը, որը, բայցի գեղարուեստական նշանա-
կութիւնից, կունենայ եւ պատմական հետա-

նոր պարբերական հրատարակութիւնների
առաջին համարը դեռ բաւական չէ, որ նրա
մասին մի որոշ հասկացողութիւն կազմվի: Այս
պատճառով էլ մենք առ այժմ միայն կարող
ենք կատարել աղոթութիւն մաղթել մեր
ռուս եղբայրացիներ: Որքան շատ լինեն տպա-
գրական խօսքին ազնուաբար ծառայողները,
այնքան մեր հասարակական կենցեղը շատ
կունենայ արտակից բարեկամներ, որոնք կուղ-
ղեն նրան դէպի գեղեցիկ ապագայ: Շարաթա-
թերթի խմբագիր հրատարակիչն է պ. Տիւր-
ժեւիլի, որ գրական անբծ և համակրելի
անցեալ ունի: Այդ անցեալը երաշխաւորու-
թիւն է, որ նոր չարթաթափերը մեր տեղա-
կան մամուլի մէջ պատուաւոր դիրք կը բռնէ:
Ուշադրութիւն է գրաւում չարթաթափերի այս
համարի «Ներքին տնտեսութիւնը»: Իրեւն նա-
խաբան, այդ բաժին վարողը մի հայեացք է
գցում կովկասեան ռուս մամուլի վրա և
զանաւոր է, որ իսկական ամենօրեայ լրագրու-
թեան նախահայր եղել է «Тифлисскій Вѣст-
никъ» լրագիրը, որ սկսեց հրատարակվել Թիֆ-
լիսում եփրատեանական թաւակների կէսից:
Մինչև այդ գոյութիւն ունէր «Кавказъ» լրա-
գիրը, որ, սակայն, մի պաշտօնական հրատա-
րակութեան նման ու անգոյն ծրագրի սահման-
ներից չէր դուրս գալիս: Այս պատմական
տեղեկութիւնը ճիշդ է ռուսերէն լեզուով հրա-
տարակվող լրագրութեան վերաբերմամբ: Բայց
մեզ թւում է, թէ յօդուածագիրը չը պիտի
անտես անէր տեղական լեզուներով հրատա-
րակվող լրագիրները: Մինչև «Тифлисскій
Вѣстникъ» լրագրի երեւան գալը հայերի և
վրացիների մէջ գոյութիւն ունէին լրագիրներ,
հիմնված մասնաւոր մարդկանց ձեռքով:
Դրանք էլ ունէին այն կերպարանքը, որ ստա-
ցաւ առաջին ռուսերէն մասնաւոր լրագիրը:
Մենք միանգամայն համաձայն ենք յօդուածա-
գրի հետ, որ մեր կովկասեան մամուլի մէջ էլ
երեւան եկաւ անկման այն շրջանը, երբ փո-
ղոցը ու փողոցի պահանջները բռնեցին նախ-
կին իդէալական ուղղութեան տեղը: Այն, դա
մի ցաւալի արշաւանք էր, որ չարթաթափե-
կեղտոտ հայրենիքով զինված փողոցը մտցրեց
մեր մամուլի մէջ: Նա աւերանքներ գործեց ոչ
միայն ռուսաց, այլ և հայոց մամուլի մէջ:
Յօդուածագիրը հաւատում է, որ լուրջ, ազնիւ,
զաղափարական խօսքի նշանակութիւնը դեռ
բոլորովին չէ մոռացված մեզանում, որ նրան
կարօտում է հասարակութիւնը: Մենք էլ ու-
նենք նոյն հաւատը և մեզ համար աւելի քան
պարզ ու անհերքելի է, որ ազնիւ հրապարա-
կախօսութիւնը պիտի զանաւոր մեր հասարա-

կութեան միակ դաստիարակը: Մենք ողջու-
նում ենք ամեն մէկին, որ հրապարակ է իջ-
նում իրեն գաղափարին եւ առաջադիմու-
թեան ծառայող անշահասէր զինուոր:

Նոր չարթաթափերի առիթով գուցէ աւե-
լորդ չը լինի շնչով այն հանգամանքը, որ
նրան ղեկավարողները զիստաբարպէս հին
գրական ոյժեր են: Նոր տերունիքը առհասարակ
աչքի է ընկնում իր անընդունակութեամբ,
զաղափարի մարդիկ այդ տերունիքի չեն դուրս
գալիս: Եւ որքան ցաւալի, յուսահատական է
այս իրողութիւնը: Բերնեք մի օրինակ, Հայե-
րէն մի չարթաթափերի անցնում է մի կրիտա-
սարդ ինտելիգենտի ձեռքը: Բայց փոխվում է
նա—Ամենեւին: Ինչ անում էր այդ չարթաթա-
փերի անգրագէտ, աւելի չարչիութեամբ քան
գրական գործերով հետաքրքրվող խմբագիրը,
նոյնը չարունակում է նրա ինտելիգենտ փո-
խանորդը: Անինքնուրոյնութիւնը, գաղափար-
ների բացակայութիւնը այնքան բացարձակ
տիրապետութիւն են ձեռք բերել մեզանում,
որ նոյն իսկ գրական մի հասարակ վայելչու-
թիւնը չէ կարողանում տեղ բռնել այն օրգա-
նում, որ արդէն ամենքին զգուցեցել է իր
կեղտոտութիւններով: Ողբալի աւանդապահու-
թիւն, ողբալի անընդունակութիւն, ողբալի
սերունդ...

Մ Ա Տ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Նիդալար Մուրադեան. Գնական պատմութիւն Արշակ
Երկրորդի և անոր Պապ որդւոյն Անդրանիկի, 1900.
Էր. ԺԱ+199, գին 2,50 ֆր.

Հեղինակը (այժմ վախճանված) նկատում է,
որ Արշակ Բ-ի և նրա Պապ որդու կենանք
ու գործերը խեղաթիւրված են մեր հին հեղի-
նակների, զիստաբարպէս Փաւստոսի և Խորե-
նացու գրութեան խեղաթիւրում: Այս երկու թագաւոր-
ները իսկապէս պատմական մեծ անձնաւորու-
թիւններ են եղել—տաղանդաւոր քաղաքագէտ,
հմուտ ռազմագէտ, գերազանց հանճար և այլն,
բայց պատմութեան մէջ դուրս են բերված
և մինչև այսօր ճանաչված են իրենց անպի-
տան, անխնայ, վատարարող, վնասադրոժ ան-
ձեր: Ուստի հեղինակն իր գրքի մէջ նպատակ
է դնում՝ վերացնել այս երկու թագաւորների
վրա բարդված չարափօսութիւններն ու վատա-
համարիչ առասպելները և տալ նրանց ճշ-
գրիտ պատմութիւնը, որով գիտութեան մի
ծառայութիւն կը լինի մատուցած և մասնա-
ւանդ հայրենասիրական մի քաղցր պարտաւա-
նութիւն կատարած:

Կուսումնարանում է 15,000 ր.

Այս կէտերի իրադրոժման համար՝ քաղաքի
բիւրօէտի վրա աւելացրած է հարկաւոր գու-
մարը:

Քաղաքը սպասում է հիւրերի ստուար բազ-
մութիւն, և միջնորդական բիւրօն է ժամանակին
ընակարաններ գտնելու համար այժմանից ա-
ւելի քան 600 սենեակ ունի իր տրամադրու-
թեան տակ: Մտադրութիւն կայ հրաւիրել
պատուաւոր ներկայացուցիչներ արտասահմա-
նեան այն քաղաքներից, որոնք այս կամ
այն կերպով կապված են Րիգայի անցեա-
լին կամ ներկային: Հաւանական է, որ այդ
տեսակէտով առաջին տեղը բռնէ Լիւ-
բեկը, որը համարվում է Մայր Րիգայի և
որը վաղուց է վեր առեւտրական կապերով
սիրտ մտերմացած է Րիգային: Ապա Բրէսլնը,
որտեղից գաղթել է այս երկիրը արքեպիսկո-
պոս Ալեքեյը—քաղաքի հիմնադիրը: Մայրա-
քաղաքների թերթերը հաղորդում են, որ Պե-
տերբուրգի և Մոսկուայի գերմանական գա-
ղութները նոյնպէս մտադիր են տօնելու Րի-
գայի 700-ամեակը: Պէտք է ենթադրել, որ
յուդայանդէսը կը լինի շատ հետաքրքրական
և բազմակողմանի:

2. Գեղամանց

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՐԻԳԱՅՈՒՄ

(Նամակ Րիգայից)

Այս տարվայ յունիսի 1-ից Րիգայում բաց-
վում է արգինաբերական-արհեստագիտական
ցուցահանդէս քաղաքի գոյութեան 700-ամեայ
յօթելանի առիթով, պատուաւոր նախագահու-
թեամբ ֆինլանդների մինիստր ստատ-սեկրե-
տար Ս. Իւ. Վիտտէի: Այդ յօթելանի տօնելու
ինչպէս, իր ժամանակին, տեղական ռուս,
գերմանական և լատիշ պարբերական թեր-
թերում, որոնց թիւը 10-ի է հասնում, բաւա-
կան վիճաբանութեան նիւթ մատակարարեց,
բայց վերջը, գերմանական թերթերի կարծիքի
համաձայն, որոշվեց ցուցահանդէսով տօնել
մի միայն, որը համակրութիւն գտաւ նաեւ
քաղաքային խորհրդարանի կողմից: Այժմ
ցուցահանդէսը բարոյական և նիւթական նե-
ցուկ է գտնում ոչ միայն քաղաքային ինքնա-
վարութեան, տեղական վաճառականական կո-
միտէի, արհեստաւորների մէջ, այլ նաեւ
Լատվիանդիայի, Լիթվանդիայի և Կուրլանդիայի
շատ քաղաքների զանազան հասարակական
հիմնարկութիւններում:

Գրուածքը ընդհանրապէս ջատագովական բնանորոթիւն է կրում եւ գիտական արժէքից զուրկ է։ Հեղինակը ուղիղ ըմբռնողութիւն չէ կազմել Հայաստանի վաղեմի քաղաքական եւ ներքին կեանքի մասին, որի պատմութիւնն ուղղում է վերականգնել, ճիշտ հայեցակէտ չունի Փաւստոսի եւ Խորենացու գրուածքների մասին, որոնք նրա քննադատութեան առարկան են կազմում։ Նա ներթափաչում է սրանք ասածները, եւ գտնում է սխալ կամ ուղիղ, առանց կարողանալու թափանցել գործի էութեան մէջ եւ գնահատել այս հեղինակների ասածները իւրաքանչիւրի յատուկ արժէքով։ Այս պատճառով հեղինակի բացատրութիւններն ընդհանրապէս միամիտ կամ հակասական են եւ եզրակացութիւններն անհիմն։ Թոյլ են մասնաւոր այն տեղերը, ուր հեղինակն աշխատում է հերքել վերոյիշեալ երկու թաղաւորների վրա բարդված մեղադրանքները։ այնպիսի փաստաբանութիւններ, թէ գրանք «հաւանական չեն», կամ թէ «ուրիշ թաղաւորներ էլ այդպիսի բաներ կատարել են», հարկաւ համոզել չեն կարող լինել։ Համեմատաբար աւելի աջողված են այն հատուածները, որտեղ Պապի գործունեութիւնն է քննուած եւ հերքում է այն մեղադրանքները, թէ Պապը թուշուրել է Ներսէս մեծ կաթողիկոսին եւ ոչնչացրել է նրա բարեգործական հիմնարկութիւնները։ Բայց այս կէտերում էլ հեղինակի յայտնած մոգերը եւ ունեցած հայեացքը ընթերցողի համար նոր չեն։ Նոյն կերպ խօսելու ջատագովել են Պապին մասամբ Յ. Գաթրիճեան, բայց առաւելապէս Ա. Գարագաշեան, որի Բնական պատմութիւնը այս գրուածքից առաջ է թէ գրութեան եւ թէ տպագրութեան ժամանակով։

Գրքի մասին այսքան Բայց նա ունի եւ մի Յատկութիւն (եր. 185—198), որ շատ ընտրող է մեր գրական բարձր ճանաչելու նկատմամբ։ Այս յաւելումներից իմանում ենք, որ հեղինակն այս գրուածքը ներկայացրած է եղել իզմիրեան մրցանակաբաշխութեան յանձնաժողովին, որ նրան յանձնել է քննիչների՝ նրանց կարծիքն ու եզրակացութիւնները իմանալու համար։ Բնիչներից մէկը, Մարկոս Աղաբեկեան, նպատակաւոր կարծիք է ցայտնել, իսկ երկրորդ քննիչը, Օրմանեան եպիսկոպոսը (այժմ պատրիարք) ոչ բողոքողին նպատակաւոր, եւ յանձնաժողովը մրցանակի չէ արժանացրել այս աշխատութիւնը։ Հեղինակը այս առիթով Պոսի «Մանգուլ» լրագրում տպել է մի «Բնականա-տուրիւն քննադատութեան առ գեր. Օրմանեան», որի մէջ բերում է ինչպէս քննիչի դիտողութեան կէտերն ու «հերքում է»։ Օրմանեան եպիսկոպոսը դիտողութիւնները, որչափ մենք ենք հասկանում միանգամայն արդարացի են եւ նրա եզրակացութիւնը աւելի նպատակաւոր է գրքի համար՝ քան թէ սա արժէքը։ Բայց հեղինակը զայրոյթով, հեգնութիւններով լի մի պատասխան է ուղղում նրան լրագրի միջոցով, մի պարտաւարքի, որ թէպէտ ուղղված է ուրիշի դէմ, բայց իսկապէս վիրաւորում է իրան, գործ հեղինակին։ Մեր կարծիքով՝ հրատարակիչները, որոնք անշուշտ բարի գիտաւորութեամբ որոշել են տպագրել «հանրածանօթ հեղինակի» այս աշխատանքը՝ ճշմարիտ բարեկամութիւն արած կը լինէին հանդուգնալին՝ եթէ չը տպագրէին գոն է նրա «Բնականա-տուրիւն»։ Ստ. Մ.

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Եթէ», համառոտ կենսագրութիւն (պատկերով). կաղմ. Ս. Փաւստոսեան, 148 եր. 160 ֆ. 30 ֆ. Թիֆլիս 1900 թ. 2) Ցանաւ ա. ք. Մարաղեան «Երանանք ինչորի առ-թիւ». 64 եր. 160 ֆ. 40 ֆ. Թիֆլիս 1901 թ. 3) Քրիստոնէական վարդապետութիւն պետական միջնակարգ դպրոցների հայ աշակերտների համար. աշխ. Ն. ք. Ղամադեան, 56 եր. 160 ֆ. 20 ֆ. Թիֆլիս, 1901 թ. 4) Բժշ. Վ. Արծրունի, Բժշկի դրոյցներ. Ղատ ցաւ. պատկերապարզ 32 եր. 160 ֆ. 6 ֆ. Թիֆլիս 1901 թ.։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, մայիսի 20-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում կայացաւ պ. Յովհաննիսեանի երկրորդ դէրբուտը։ Երիտասարդը ընտրել էր երկրորդ փորձի համար Ա. Դիմալի «Բիւն» դրաման, որի մէջ կատարում էր հերոսի դերը։ «Բիւն»-ը սալոնական պիէս է, որի մէջ դուրս է բերված Անգլիայի բարձր չըմանը իր ներքին աշխարհայեցողութեամբ, իր նիստ ու կացով, — չըման, ուր մուտք ունի հոշակաւոր դերասան Քինը, չնորհիւ իր վերին աստիճանի գեղարուեստական խաղի, որով յափշտակվում է այդ բարձր դասակարգը։ հետեւապէս դերասանը պէտք է համապատասխանէ այս պահանջներին։ Անմիջապէս

գեղեցիկ արտասանութեանը, որը կազմում է լաւ խաղի հիմքը, հետեւում է միմիկայի եւ ձեւերի գեղեցկութիւնը։ դերասանը ազդելով լսողութեան վրա, նաեւ պէտք է ազդէ տեսողութեան եւ սրտի վրա, ալլապէս իլլուզիան ստացվում։ Պ. Յովհաննիսեանը այս պայմաններին զուրկ է. պարոնը չունի այդ դերին յատուկ ջլղայնութիւն եւ ձայնի զգայնութիւն։ Նրա ասածը երբեք չէ ազդում հանդիսականի վրա. յուզվում է ինքը, բայց չէ կարողանում ուրիշին յուզել։

Երկրորդ գործողութեան մէջ, երբ Քինը բացատրում է օրիորդ Դէմբիին դերասանական պատրէզի դառնութիւնները, պ. Յովհաննիսեան այնպէս է զայրանում եւ գոռում, որ կարծէք կուռն է օրիորդի հետ եւ ոչ թէ համոզում. այդ դիալոգի մէջ առանձին բառերի ընդգծելը բոլորովին աւելորդ բան էր եւ միայն նսեմացրեց տպագրութիւնը։ Երրորդ գործողութեան մէջ, երիտասարդ օրիորդի հետ ընդհարման տեսարանում, պակասում էր սարկազմի արտայայտութիւնը, հոգեկան յուզմունքը։ Չաղովկայ նոյնպէս չորրորդ գործողութիւնը. այստեղ Քինի ջղերը վերին աստիճանի լարված են եւ նրա հոգեկան դրութիւնը մի փոթորկալից ծով է, իսկ պ. Յովհաննիսեանի Քինի մէջ այս կողմերը շատ դուռնատ էին, նոյն իսկ մութը. անաջող էր եւ կոպիտ վերջին տեսարանը — Համբէտի խելագարութիւնը։

Պ. Յովհաննիսեանին մենք տեսնք «Համբէտ»-ն եւ «Բիւն» դերերի մէջ. երկուսի մէջ էլ միմիկան մի առանձին դեր չէ կատարում, չէ կարողանում դէմքի արտայայտութիւնը փոփոխութեան ենթարկել. աչքի է ընկնում նա եւ ձեւերի միատեսակութիւնը եւ գլխի կրճարները. պ. Յովհաննիսեանը «Համբէտ»-ի դերի մէջ նոյն էր, ինչ որ «Բիւն»-ի մէջ, միայն հագուստը ուրիշ էր. պարոնի մէջ գերակշիռ դեր է խաղում անձնականութիւնը. պարոնը պիտանի դերասան կը լինի հասարակ պիէսների մէջ։

Գալով միւս դերակատարներին, պէտք է ասել, որ մի կատարեալ խաղատաղութիւն էր, եւ իրաւ ինչ է նշանակում այսպէս ծաղրել հասարակութիւնը եւ վայր զցել թատրոնի վարկը. այստեղից այնտեղից պատահմամբ հրաւիրված մարդիկ դուրս են գալիս բեմ լորդերի, կոմսերի դերերի մէջ, մարդիկ, որոնք նստել, վերականգնել չեն իմանում, ուր միաց խաղաւ, եւ որ գլխաւորն է՝ այդ մարդիկ չեն հասկանում ինչ են խաղում եւ ինչպէս պէտք է հագնվել. երեւի րէփսօրը հասկացողութիւն չունի այդ պիէսի ոչ հագուստի, ոչ էլ գրիմի մասին. յուշարար Սոյմոնը մեր առաջ մի պիէսով վաճառական էր, նոյնպէս տղիք էին հագնված առաջինից մինչեւ վերջինը։ Պարոններ, ինչպէս հասարակութեան համբերութիւնը եւ մի մոլորեցնէք նրան. թղթաւորէք այդպիսի խաղով «Աւազակներից» եւ «Բիւններից»։

Երկու խօսք եւս հասարակութեան հասցէին։ Հայ հասարակութիւնը թատրոնում իրան պահել չէ իմանում. առաջին կորգերը լցված են աշակերտներով եւ երիտասարդներով, որոնք տոմսակ էլ չունեն. շատ ողբել է նոյնպէս գլխարկներ գցելը պարտերից բեմը. այս տեսարանը աւելի եւս տեղեկանում է, երբ ինքը դերասանն էլ մասնակից է դառնում։ Վերջապէս ինչ նշանակութիւն ունեն այդ գոյնաւոր տպած թերթիկները «տաղանդաւոր դերասան Յովհաննիսեանին» եւ այլն. դրանց արժէքը չնչին է եւ դրանով արջի ծառայութիւն են մատուցանում այդպիսի ընդունակութիւն ունեցող դերասաններին. թատրոնը հետեւ պէտք է պահել կրկնօրներից։

Th.

ՆԱՄԱԿ ԵՐԵՆԻԱՆԻՑ

Մայիսի 4-ին Մեր քաղաքի խօսակցութեան միակ առարկան ջրի հարցն է. ձեռքէ ձեռք է պտտում ինծեմբ Միխայիլի պայմանը ջրի կօնցէսիայի վերաբերմամբ, որը քաղաքային վարչութիւնը տպագրել, տարածել է ժողովրդի մէջ՝ լսելու նաեւ ժողովրդի կարծիքը այդ մասին։ Եւ որպիսի կարծիքներ առեք, որ չեն լսվում իւրաքանչիւրի բերանից։ «Միխայիլի» առաջարկութիւնը մեզ ձեռնուռ էլ, մեր իրաւունքների բնաբարուն է, մեր քաղաքից տարեկան տասնեակ հազարներ կը տանէ. թուրք ժողովրդին մենք հարստահարում ենք, նրան արգելված է փողով ջուր գնելը եւ այլն եւ այլն, լսվում են ամեն ծակ ու ծուկից։ Մի օրոշ մասն էլ գտել է փրկարար միջոցը. այդ գիւտով

քաղաքը կարող է մի կարճ ժամանակից յետոյ ունենալ սեփական միջոցներով բերած ջուր։ Մայիսի 3-ին նշանակված է քաղաքային խորհրդի նիստ, զրված է նաեւ ջրի հարցը, որտեղ հաւանօրէն լինելու է նաեւ ինծեմբ Միխայիլի, եւ որպէս զի այդ նիստում խորհուրդը մի եզրակացութեան եկած լինի, մի օր առաջ տեղի ունեցաւ մասնաւոր խորհրդակցութիւն։ Չայնաւորներից մէկը յայտնում է, որ իրանցից շատերը եկել են գլխաւորապէս հետաքրքրվելով ձայնաւոր Մնացականեանի այն առաջարկութեամբ, որով քաղաքը կարող է իսկոյն եւ եթէ գործի անցնել Տեղից բարձրանում է ձայնաւոր Մնացականեան, մէջտեղ է բերում այն ահա-դին գործը, որ կայ խորհրդի արիւնքում 20 տարուց ի վեր եւ որի վրա մի ամբողջ շաբաթ աշխատել է պ. ձայնաւորը։ Բացում է ինծեմբ Կիրակոսեանի կազմած օպէքէնանոյ յատա-կազմի եւ պրօէկտը, առում, խօսում է քաղաքը, կէս, մի ժամ եւ դուրս է բերում, որ այդ նախագծով ջուրը նստում է քաղաքին 170,000 ռուբլի. նախագծի հաստատութիւնը ստացված է շատ վաղուց, քաղաքը ունի այս ինչ, այն ինչ գումարներ եւ կարող է վաղը գործը սկսել, ուրեմն ինչեւ Միխայիլին տալ կօնցէսիւն, որ կարող է քաղաքին հարիւր հազարներ բերել։ Մինչդեռ մի կողմից ձայնաւորներից շատերը օպէկտրված չարժեւոր են անում, մասնաւոր քաղաքագլխի հալաւակորդները, քաղաքագլուխը, համբերութիւնից դուրս եկած, մի առ մի ջրում է ձայնաւոր Մնացականեանի ոտից մինչեւ գլուխ սխալ գիւտը։

Դեռ տարիներ առաջ, խորհրդի հրաւերով, ինծեմբ Կիրակոսեանը կազմում է ջրանցքի նախագիծը, որով Լրիստուկայի աւանից մինչեւ քաղաքի մօտակայքը, երկարութեամբ 13 վերտո, ջրանցքը մետաղեայ խողովակներով կը նստի 170,000 ռ., այդտեղից մինչեւ քաղաք եւ քաղաքի մէջ ձգվող ցանցը, համարեա նոյն չափ տարածութիւն, կաւէ զոնկերով կը նստի 47,000 ռուբլի. ձայնաւոր Մնացականեան բաց է թողել նախագծի ամբողջ կէս մասը. եթէ այդ միւս կէս մասն էլ մետաղեայ խողովակներով չնստի, ինչպէս Միխայիլը է առաջարկում, ջրանցքը կը նստի ոչ թէ 47,000 ռ., այլ նոյնչափ, որչափ միւսը — այն է 170,000 ռուբլի, հետեւապէս ամբողջ ջրանցքը 340,000 ռուբլի։ Երկրորդ, այն ժամանակվայ նահանգապետը այդ նախագիծը ուղարկելով հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան, յետ է ստացել նախագիծը աւելի ճիշտ կազմելու համար, որը բոլորովին չէ նշանակում կառավարութեան կողմից հաստատված եւ թոյլատրված, քանի որ այդպիսի ձեռնարկութիւնները ենթարկված են ներքին գործերի մինիստրութեան, Երրորդ որ՝ քաղաքը ոչ մի հնարաւորութիւն չունի մի այդպիսի մեծ ձեռնարկութեան մէջ մասնկուլ։

Եւ այսպէս մէկ-մէկ հիասթափութիւնը տիրեց ամենքին։ Եւ մինչդեռ ձայնաւոր Մնացականեան տեղից վերկենալով արտասանում էր «ИЗВИНИТЕ, ГОСПОДА, Я ОШИБСЯ», զայրոյթ ու ծիծաղ էր բարձրացնել դահլիճում։ Այս բոլորից յետոյ ձայնաւորներից շատերը իրանց նկատողութեան թերթերը, որ պարտաստած էին ընդդէմ կօնցէսիայի, ծալիցին, գրպանները դրեցին եւ ոտի կանգնելով միաձայն, բացի ձայնաւոր Մնացականեանից, սկզբունքով որոշեցին կօնցէսիան տալ Միխայիլին, ի հարկէ պայմաններով մշակելուց եւ փոփոխելուց յետոյ։

Երէկվայ հերթական նիստում ջրի հարցը յետաձգվեց, որովհետեւ ինծեմբ Միխայիլը հեռագրով յայտնել էր, որ ինքը առ այժմ չէ կարող գալ եւ ուղարկել է արդէն տրամվայի պայմանը. իսկ այս պայմանը, որը անբաժան է ջրի կօնցէսիայի, դեռ չէր ստացվել Տեանքը դեռ ինչ չար ու բարի պիտի գայ ջրանցքի գլխին։

Բ. Վ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 14-ին «Մշակի» 102 համարում կարդացի մի նամակ պ. Խ. Տէր-Մարգարեանից ստորագրութեամբ։ Մի օր եւ վատ, զգուշել եղելու իրան հրապարակով յայտնել եւ ենթարկել յանցաւորին հասարակութեան դատաստանին եւ զգուշեցնել, անպայման հարկաւոր է, բայց մի պարզ գործը կերպարանափոխել — դա, իմ կարծիքով, անագնական է։

Թանդոնանց եկեղեցու նորնտիր պ. երէց-փոքր, ինչպէս երեւում է նրա գրած նամակից, իրան արդարացնում է ծխախոտների առաջ քառաձայն երգեցիկ խումբ չը պահելու համար, պատճառ բռնելով ինձ, թէ ես, իբրեւ նախկին երէցփոքր, հաշիւ չեմ տալիս եւ նրա համար էլ նա խումբը արձակեց։

Ներկայ տարվայ մարտի 17-ին երկու ստորագրութեամբ, պ. Խ. Տէր-Մարգարեանից եւ Յարութիւն քահ. Ճուղուրեանից ներկայութեամբ, Թիֆլիսի երկրորդ մասի գործակալին յանձնեցին եկեղեցապատկան փողը, 1901 թ-ի հաշուեմատներն եւ եկեղեցական գործերը, որոնք ինձ մօտ էին գտնվում. որա ստուգութեան համար խմբագրութեանը ներկայացնում եմ գործակալից տուած երկու ապահովագիրը։

Ինչպէս ես տեղեկացայ, պ. Խ. Տէր-Մարգարեանից գործակալից մարտի 20-ին ստացել է թէ գործերը եւ թէ կանխիկ գրամը. գրանից յետոյ ես զարմանում եմ, թէ պ. Նորենտիր երէցփոքր ինչպէս է հրապարակով յայտնում թէ ոչ մի գործ չէ ստացել նախկին երէցփոքրից, այսինքն ինձանից. իսկ եթէ պ. Տէր-Մարգարեանը կարծում է, թէ ինձ մօտ կայ որ եւ է հաշիւ եկեղեցու գործերի վերաբերեալ, ինչպէս եմ չնորհ բերէ եւ ստանալ երբ կամենայ. ոչ ոք ցանկութիւն չունի հաշիւը թաղցնելու. եթէ պ. Տէր-Մարգարեանը 320 ռուբլի ամսական եկամուտից վճարէ խմբին 55 ռուբլի, կարծեմ ոչ ոք նրան այդ բանը չէր խանգարի, եւ փոխանակ տրտունջ յայտնելու, ծխախոտները չնորհակալ կը լինէին, իսկ այդ բանում մեղաւոր ուրիշին ճանաչել աւելի քան անհասկանալի է։

Ս. Ղամադեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Պարզիկ լրագիրները հաղորդում են, որ ապրիլի 12-ին Ասիական ընկերութեան անդամ է ընտրվել «Բնականա-հանդէպի խմբագիր պ. Կ. Բաւաշեան. պ.պ. Ժ. Հայէվի եւ Մէյէ իրանց ճանաչումն մեծ գովառանքներով են խօսել թեկնածուի գիտական արժանիքների մասին։ Այդ թեկնածութեան ջերմ պաշտպան է հանդիսացել իր ճառում նաեւ պ. Միքայիլ Թաւմաշեան. որ մինչեւ այդ ժամանակ այդ ընկերութեան միակ հայ անդամն էր։

Միջնակարգ դպրոցների բարեփոխութեան վերաբերմամբ ժողովրդական լուսաւորութեան մի-նիստութեան մէջ կազմված նախագծի գլխաւոր կէտերը հետեւեալներն են. 1) նկատի կայ ստեղծել մի միակ միջնակարգ ուսումնարան, որի ուսման ծրագրերը թէ միմիկայներով են լինում մասնաւոր ուսումնարաններում պէտք է լինի նոյնը։ Մտնվում են հետեւեալ նոր եւ պարտաւորական առարկաները՝ հայրենագիտութիւն, օրէնսգիտութիւն եւ բնագիտական առարկաներ։ Ուսման ընթացքը կը տեւէ եօթ տարի։ Յետեւեալ լեզուներ կը դասուանդվի Մօսկվայի, Պետերբուրգի, Կիւիլի, Վարշայի եւ Իւրիլի գիմնազիաներում։ Լատիներէնի դասուանդութիւնը կը սկսվի 4-րորդ դասարանից։ Ստորին երեք դասարանների ուսման ծրագրերը համապատասխան կը լինի ստորին ընդհանուր կրթական դպրոցների դասընթացին։ Միջնակարգ դպրոց աւարտողները առանց քննութեան կարող են մտնել համալսարանների ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետները. իւրաւաբանական եւ բժշկական ֆակուլտետները կարող են մտնել առանց քննութեան միայն նրանք, որոնք ուսումնասիրել են լատիներէն լեզուն, իսկ ֆիզիկական ֆակուլտետը — լատիներէն եւ յունարէն լեզուները ուսումնասիրողները։ Միջնակարգ դպրոցների այն ընթացաւարտները, որոնք չեն սովորել հին լեզուները, կարող են մտնել իւրաւաբանական, բժշկական եւ ֆիզիկական ֆակուլտետները, նախապէս քննութիւն տալով հին լեզուներից այնպիսի ծրագրով, որ շատ աւելի կրճատ կը լինի այժմեան ծրագրի հետ համեմատելով։ Միջնակարգ դպրոցն աւարտողների զինուորապարական արտօնութիւնները նշանաւոր չափով կընդարձակվեն։

Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ 1882 թ-ի յունվարի մէկից մինչեւ 1899 թ-ի յունվարի 1-ը եւրոպական Ռուսաստանից Միլիոն են գաղթել 1,150,095 հոգի։ Գաղթականներին երկրագործական գործիքներ եւ գիւղատնտեսութեան համար այլ անհրաժեշտ առարկաներ մատակարարելու համար կազմակերպված են գիւղատնտեսական պահեստներ Սիբիրի երկաւորալայն գծի ամբողջ երկարութեամբ։ Պահեստներից մինչեւ այժմ ծախված են մօտ 2000 գուլթան, 4000 արօր, 300 հնձարար մեքենայ, խոտ քաղելու 80 գործիք եւ այլ առարկաներ։

«Новое Обозрение» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւորների ընտրութիւնները պէտք է տեղի ունենան առաջիկայ աշնանը։

Նոյն լրագիրը տեղեկութիւն է ստացել Պետերբուրգից, որ բանակցութիւնները անգլիա-

կան դրամատները հետ կախեցին երկաթուղու շինութեան մասին առ այժմ ոչ մի դրամ կան արդիւնք չը տուին: Այսպիսով Կովկասի արմատաւորութեան մէջը դեռ անտարող ժամանակով կտրված կը մնայ մեր երկրի կենտրոնները:

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրողները, ներկայումս մշակված է ծրագիր բարեփոխելու Պետերբուրգի կանանց առևտրական դպրոցը եւ ձեռագործական—արհեստագիտական ուսումնարանը ու վերածելու նրան կանանց պոլիտեխնիկական ինստիտուտի: Մշակված նախագիծով ինստիտուտը պէտք է ունենայ երեք բաժանմունք—առևտրական, գեղարվեստական—արդիւնագործական եւ նոր լեզուներով: Նախագիծը շուտով կը ներկայացվի կառավարութեան հաստատութեան:

Մայիս ամսի ընթացքում, ինչպէս հաղորդում է «Рыб. Вѣд.» լրագրի, բանասիրի գլխավոր վարչութեան մէջ էր պարապմունքները կը սկսէ այն մասնագիտով, որ քննում է տաժանակիր աշխատանքների բարեփոխութեան հարցը Սախալին կղզու վրա: Մասնագիտովի պարապմունքներն կը մասնակցեն ներկայացուցիչներ արգարադատութեան, ներքին գործերի, զինուորական, ծովային, երկրագործութեան մինիստրութիւնների եւ պետական կոնսուլի կողմից:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մօտ մէկ ամիս է, որ շարունակ անձրեւ է գալիս Հայաստանը եթէ ազատ մնա զանազան պատահարներից, շատ լաւ ապագայ են խոստանում: Անձրեւների առատութեան պատճառով այս տարի իւր ու պահիրը առատ է եւ էժան: Առ այժմ կարագ իւրի պուրը ծախվում է 8—9 ռուբլի, անձր պանիրը 2 ռ. 20 կ.—2 ռ. 40 կ., չնչնի պանիրը՝ 1 ռ. 30 կ. պուրը, որ, եթէ համեմատենք անցեալ տարվայ հետ, շատ էժան է»:

ԵՐԵՎԱՆԻՑ երիտասարդների մի խումբ 20 ստորագրութեամբ ուղարկել են պ. Սունդուկեանցին հետեւեալ հեռագիրը. «Երեւանի երիտասարդութիւնը ցնծում է Պէպօսի երեսնամեայ յօրնախանական ներկայակցության արժեքով եւ համակրութեամբ շնորհաւորում է տաղանդաւոր հեղինակին»:

ԵՐԵՎԱՆԻՑ, մայիսի 20-ին, ուղարկված է պ. Գաբրիէլ Սունդուկեանցին հետեւեալ հեռագիրը. «Երեւանը յետ չընկաւ ուրիշ քաղաքներից եւ այսօր տօնում է ձեր անմահ Պէպօսի յօրնախանը: Ծանկանում ենք ձեզ երկար ու արդիւնաւէտ կեանք եւ սպասում ենք ձեր տաղանդի մի նոր հզոր ստեղծագործութեան յօգուտ պաշտպանի դրամատիկական բեմի: Սիրանոյ, Փառանձիմ, Զարուհի, Պետրոսեան, Վրոյր, Աղայեան, Էմին»:

ՇՆՈՂ գիւղից (Բօրչալուի գաւառ) մեզ գրում են. «Մայիսի 17-ին, ցերեկվայ 4 ժամին երկինքը մթնեց, սկզբում եկաւ անձրեւ, որի հետ միաժամանակ սկսեց տեղալ այստեղ դեռ եւս չը տեսնված մեծութեամբ կարկուտ եւ րօպէսպէս ոչնչացրեց գիւղիս հիւսիս-արեւելեան կողմը գտնվող բոլոր արտերը եւ պտղատու այգիները: Ապա անցնելով մեր հարեւան Արծիս գիւղը, այնտեղ եւս հողին հաւասարեցրեց բոլոր ցանքերը եւ, այս տարի առատութիւն խոստացող, պտղատու այգիները կարկուտ գերեց մնացած այգիներից այս տարի եւս բերք չէ սպասվում, որովհետեւ անցեալ տարվայ հիւսիս-արեւելեան խաղողի վազերը այն աստիճան են ուժասպառ եղած, որ անընդունակ են առողջ տուրջ տալու եւ գոցէ իսպառ չորանան, եթէ բժշկութեան չենթարկվին: Ցորենը մեզանում ծախվում է թաղարը (9 պ.) 10 ռ., իւղի պուրը 10 ռուբլի»:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Վալուածատէր Կօրծովի կալուածքում հրդեհ պատահեց, այրվեց Խառոտաւունը, որի մէջ այրվեցին եօթը լաւ ձիեր»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մայիսի 13-ին տեղիս յաջորդ կիրակի վարդապետ Կիրեղեանի նախագահութեամբ կայացաւ ծխականների ժողով ընտրելու հոգաբարձուներ՝ եղբ. Բաղդասարեանների նստիւթի հողի վրա նոր եկեղեցի կառուցանելու համար: 700 հրաւիրվածներից ներկայ էին միայն 54 հոգի: Գաղանիք ուժեղացրեցին ընտրվեցին ութը հոգի հոգաբարձուներ, որոնց պարտականութիւնն է

ժողովրդից փող հաւաքել եւ շինութեան մասին հող տանել, իսկ նրանց կանգիդատներ ընտրվեցին վեց հոգի: Յուսում ենք, որ ժողովուրդը բուռն աջակցութիւն ցոյց կը տայ եւ չի խնայի իր լուծման ու օգնութիւնը, որպէս զի շուտով գործի ձեռնարկեն: Ամենից յետընկած գիւղերն անգամ ունեն իրանց վայելուչ եկեղեցին, իսկ մեր քաղաքը, որը 15 հազար հայ բնակիչ ունի, մի կարգին եւ վայելուչ աղօթատուն չունի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փրանսիական զինուորական մինիստր գեներալ Անդրէ ներկայացրեց պատգամաւորների ժողովին մի օրինագիծ զինուորական դատավարութիւնը վերափոխելու մասին, որի անհրաժեշտութիւնը առանձնապէս զգալի դարձաւ Դրէյֆուսի գործից յետոյ: Մինիստրական օրինագիծը իր մէջ պարունակում է այն բոլոր բարեփոխութիւնները, որ պահանջում էին սեփական եւ պատգամաւորների ժողովի առաջադէմ տարրերը: Ամենից առաջ այդ օրինագիծով առաջարկվում է հանել զինուորական դատարանների իրաւասութեան շրջանից այն յանցանքները, որ կատարում են զինուորականները խաղաղ ժամանակ եւ ոչ իրանց պաշտօնական պարտաւորութիւնները կատարելիս: Ապա պայմանական դատաւարականութեան եւ սկզբնական քննութեան ժամանակ մեղադրվողի պաշտպանի ներկայ լինելու թույլտւութեան վերաբերեալ օրէնքները պէտք է գործադրվեն նաեւ զինուորական դատարաններում: Բացի արանքի օրինագիծը միջոցներ է սահմանում, որոնք պէտք է նպաստեն նախնական քննութեան արագ առաջ տանելուն: Ձինուորական դատական գործերի քննութեան համար հիմնվում է մի մշտական ատենա ներկայակաւոր իրաւաբաններից եւ զինուորական—իրաւագիտական կրթութիւն ստացած օֆիցէրներից: Այս ատենա կը գործէ բոլորովին ինքնուրույն նախարար եւ ոչ մի կախում չի ունենալ զօրքի գլխավոր հրամանատարից: Գաղաքական շրջաններում մեծ համակրութեամբ են վերաբերվում Անդրէի կազմած օրինագիծին: Զարակողմանները ցանկութիւն են յայտնում, որ օրինագիծն ընդունվի պատգամաւորների ժողովի այժմեան կազմի ժամանակ եւ չը յետաձգվի մինչեւ 1902 թ. ապրիլի նոր ընտրութիւնները: Առ այժմ օրինագիծը յանձնված է այն մասնագիտովին, որ քննում է զօրքին վերաբերեալ գործերը:

—Դեռ առաջ էլ Գերմանիայում լուրեր էին տարածված, որ Բրէմսնում, սպանութեան փորձի ժամանակ, Վիլհելմ II կայսրի ստացած վերքը այնպէս թեթեւ չէ եղել, ինչպէս հաւատացնում էին պաշտօնական թերթերը, այլ, ընդհանրապէս, եղել է չափազանց լուրջ: Այժմ այդ հանգամանքը հաստատում է գերմանական զինուորական միութեան նախագահ գեներալ Շպից, որի ստեղծված ստացած վերքի սպին ընդ միջուկը կը մնայ կայսրի երեսի վրա: Եթէ երկաթէ կտորը դիպչէր մի քառորդ դիւյս հեռու վերքի տեղից, անշուշտ կայսրի գանգը ջարդված կը լինէր: Վէյլանդ այնպիսի ուժով նետեց երկաթէ կտորը, որ նա, թուելիս դիպչելով զոլիսոր Լէյպցիգին, սատակ ցաւ պատճառեց նրան, թէ եւ նա հաստ մուշուկէ էր հագնւել: Այսպիսով Վիլհելմ կայսրը ազատվեց անխուսափելի մահից: Վէյլանդ, սպանութեան փորձ կատարողը, ենթարկված է քննութեան հոգեկան հիւանդութիւնը հաստատվելու վեց բժիշկների կողմից, որոնք տարբեր կարծիքներ են յայտնել նրա մասին:

—Արտասանականութիւնը լրագրիչներից մէկը գրում է. «Պետական յեղափոխութեան նախաւորութիւնը Թիւրքիայում հետզհետէ աւելի եւ աւելի հաւանական է դառնում եւ գուցէ մօտ է բարեփոխութեան եւ բարեկեցութեան ժամը մեր սիրելի հայրենիքի բնակիչների համար: Սակայն ի նկատի առնելով մերձաւոր ապագան, անհրաժեշտ է, որ երիտասարդ թիւրքերը համաձայնութեան գային իրանց գաղափարակից հայերի եւ մակեդոնական բուլղարների հետ, որպէս զի կործանելութեան մի ընդհանուր ծրագիր կարգին: Առ այժմ երիտասարդ թիւրքերի եւ հայերի ու բուլղարների ձգտումները տարբեր են: Երիտասարդ թիւրքերի մեծամասնութիւնը ձգտում է վերականգնել Միջագետքային սահմանադրութիւնը եւ հիմնական բարեփոխութիւններ մտցնել թիւրքիայում, այն ինչ հայերն ու մակեդոնացիները ձգտում են ինքնավարութեան: Ահա այս կետում է, որ երիտասարդ թիւրքերը չեն կարողանում համաձայնվել հայերի ու մակեդոնացիների հետ, համոզված լինելով, որ այդ ցանկութեան իրագործումը միայն աւելորդ մասերի կը բաժանէ պետութիւնը»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

19 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 19-ին Գառնիս Զաւապար ընկաւ ինստիտուտների այն աշակեր-

տուհիները, որոնք աւարտել էին իրանց ուսման ընթացքը չիֆրներով եւ ոսկէ եւ արծաթէ մեդալներով, ուր նրանք ներկայացան Թաւրուհի կայսրուհի Մարիա Ֆեօդորովնային: Մայիսի 19-ին սենատը առանց հետեւանքների թողեց կօրնէտ Լեւեպիցկու գանգատը Օրլովի նահանգական դատարանի վճռի դէմ, որը ազնուական Բանտիլին սպանելու համար դատաւարութեւն էր նրան չորս տարվայ բերդարգելութեան:

ՀՈՍԷ: Թագուհին առաւօտեան 9 ժամին աղջիկ ծնեց: Թագուհին եւ պրինցուհին իրանց լաւ են զգում:

ԿԱՊՇՏԱՆԻՑ: Կապի գաղթականութեան կենտրոնական շրջաններում ձեռքից ձեռք է պըտում մի խնդրագիր, որի մէջ խնդրում են ոչնչացնել այժմեան պատասխանատու կառավարութիւնը եւ թոյլ տալ, որ գործերը Աֆրիկայի հարաւում կարգի բերէ Անգլիայի կառավարութիւնը: Խնդրագիրը ստորագրողների թւում գտնվում են մեծ թւով հօլանդացիներ:

ԵՆՈՂԱՄԱ: Կայսրը, Իտաի հետ խօսակցութիւնից յետոյ, նորից կանչեց վիկոնտ Կաստուրային: Կարծում են, որ Կաստուրա այժմ յանձն կառնի մինիստրութեան կազմակերպութիւնը: Այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, հաստատվում է կօրէյական կվէլպարտ կղզու վրա քրիստոնեաների դէմ եղած անկարողութեան քրիստոնեաների դէմ եղած անկարողութեան քրիստոնեաների լուրը, իսկ ֆրանսիական քառանայի սպանութիւնը չէ հաստատվում: Կօրէյական կառավարութիւնը զօրքեր է ուղարկում անկարգութիւնների տեղը:

ՇԱՆԳՀԱՅ: Անիխայի նահանգից ստացված տեղեկութիւնների համեմատ, ամբողջ նահանգում մեծ յուզմունք է նկատվում, ոչ այնքան քաղաքական պատճառներով, որքան մորեխ երեւալու պատճառով, որը արագութեամբ ոչնչացնում է ծիւրերը:

ԲԵՐԼԻՆ: Գերմանական զբահակիր նաւատորմը այսօր Վուզուհից ճանապարհ ընկաւ դէպի Սինգապուր:

ՊՕՏՄԱՄ: Կայսրը շնորհեց հօլանդական թագուհուն Լուիզայի չքանչքան, որի վրա փորագրված են 1813 եւ 1814 թվերը, իսկ Նիդերլանդեան Հէնրիխ պրինցին—Սեւ Արծուի նշանները:

ՆԻՒԵՐՈՐԿ: Միացեալ-Նահանգների կառավարութիւնը չէ կարող մասնակցել չինական փոխառութեան երաշխաւորութեան մէջ, որովհետեւ սահմանադրութիւնը արգելում է այդ բանը:

ԲԵՐԼԻՆ: «Norddeutsche Zeitung» հաղորդում է, որ կայսերական կանցլէր մինիստր նախագահ Բիւլովը, ի նկատի առնելով անհրաժեշտ տեղեկութիւնները, որոնք ստացված են վերջին ժամանակները ցանքների դրութեան մասին կայսրութեան ընդարձակ տարածութեան վրա, առաջարկեց կարինէտին, որպէս զի իւրաքանչիւր մինիստրութեան մէջ կառավարական համապատասխան միջոցներ ձեռք առնվին սպանացող անբերրութեան նկատմամբ:

ՐՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Գիւլերվայ երկու ժամին գաղի գործարանում պայթելու տեղի ունեցաւ ամբարանային: Պայթելու ոյժը ներգին էր. տներում պատուհանները ճեղքվեցին, որ սարսափ տարածեց քաղաքում:

20 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Փոխ-ծովագետ Ալէքսեւի Պօրտ-Արտուրից գեկուցանում է. «Գերմանալէտէնանա Յէրպիցկի: հեռագրում է Մուկղէնից, որ Թագաւոր Կայսրի ծննդան օրը ցգեանցիները վարչութեան բոլոր առաջ ներկայացուցիչներին հետ միասին եկաւ շնորհաւորելու եւ շնորհակալութիւն յայտնելու երկրորդ խաղաղացնելու, խոնգուխներին ջնջելու եւ լուստայիների աւազակախմբերին Մուկղէն գնալը չը թոյլ տալու համար. ցգեանցիները ավիտայով ներկայ էր մարմնաւոր, զօրանալէսին եւ նախաձայնին, որի ժամանակ իրան յանձնված նահանգի անուհից առաջարկեց Թագաւոր Կայսրի կնիքը: Ամբողջ քաղաքը զարդարված է առւսաց եւ ազգային դրոշմակներով»:

ԿԻՐՁ: Սիմֆերոպոլի դատարանի ժամանակաւոր նստադրանք քննեց Իվկովիչ եւ Գորաշուկ ծովային աւազակների դժբեր: Նրանք 1899 թվի մարտին Կերչի նեղուցում գիւլերը յարձակվեցին սուպատուար նաւի վրա եւ սպանեցին ու կողոպտեցին նաւի վրա գտնվող երեք մարդկանց եւ, բացի դրանից, իրանց ընկերակիցներին մէկին. նաւաւը դիմկներով նրանք դէպի ծով յատակը խորատակեցին: Իվկովիչ դատաւարական քան, իսկ Գորաշուկ տան եւ չինգ տարվայ տաժանակիր աշխատանքներին:

ՏԻԻՄԷՆ: Անձրեւներ եկան, որոնք կենդանաւորին բուսականութիւնը:

ՆՕՎԵՉԻՐԿԱՍԿ: Ամբողջ մայիսին շարունակվող սաստիկ չոր տեղ-տեղ միասակար աղբեցութիւն ունեցաւ ցորենի վրա: Այգիներում երեւցին խիստ շատ թրթուռներ:

ԵԿԱՏԵՐԻՆՔՈՒՐԳ: Ձիւն եկաւ:

ՄՕՍԿՎԱ: Մայիսի 19-ին վախճանվեց Կուզմա Տերեմտեվիչ Սօլլաուսենկով:

ՄՕՖԻԱ: Ժողովը որոշեց մեղադրանք նաչօվիչի, Պէշկովի եւ Վաչօվի դէմ: Ռուսաց ծովապետ Բիրիլովին շնորհված է պրինցուական ծառայութիւնների համար չքանչքան ժապաւէնը, նա ճանապարհ ընկաւ Բէլգրադ:

ԲԵՐԼԻՆ: Կայսրը տուեց իր համաձայնութիւնը, որպէս զի ֆրանսիական օֆիցէրներին գերմանական երկրները այցելելու համար թոյլտւութիւն տալու ժամանակ մի քանի դիւրութիւններ տրվին:

Պէկիւն: Ձինաստանի անպայման համաձայնութիւնը 450 միլիոն տայել վարձատրութիւն վճարելու՝ մեծ հաճոյք պատճառեց դեսպաններին: Այժմ չը վճարված են միւս միայն մի քանի աւելի քիչ նշանակութիւն ունեցող հարցեր, որոնցից յետոյ բանակցութիւնները բոլորովին կը վերջանան. սպասում են սակայն, որ փոքր զանգաղումն առաջ կը գալ զօրքերը Ձինաստանից հեռացնելու անհրաժեշտութեան շնորհիւ: Մի քանի օտարազգի ներկայացուցիչներ չեն կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարող է Ձինաստանը ապահովեցնել վարձատրութեան ձիւղ վճարումը, ինչպէս այդ պահանջում է միասնաւոր յայտագիրը: Դեսպաններին մեծամասնութիւնը պնդում է, թէ պէտք է 10% ծովային մաքս նշանակել եւ լիկինի գանձման ֆոնդից հինգ միլիոն տայել հանել, որով 23 միլիոն տայել կը մնայ, արդէն գոյութիւն ունեցող արտաքին պարտքի տոկոսները վճարելուց յետոյ. օտարազգի ներկայացուցիչները կընդունեն ավաւանդման այդ ձեւը, եթէ Ձինաստանը վերադառնի լիկինի գանձումը օտարերկրեայ ապրանքներից:

21 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 20-ին Կրանսուելսկի բանակում Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ Իզմայիլեան գնդի եկեղեցական զօրահանդէս այդ դնդի տօնի առթիւով:

ՕՐԵՍՍԱ: Օծվեցին քաղաքային ջրանցքի ջրաբարձ «Չուսկա» կայարանի շէնքերը, որոնց միջոցով կայարանի ջրաբարձական ընդունալութիւնը հասնում է այժմ օրեկան 713 միլիոն գոլի:

ԿՕՎՆԱ: Ձինուորական մինիստրը գալու է այստեղ երկու օրով:

ՆՕՎՕՐՕՍԻԵՍԿ: Երաշտային եղանակ է անում: Ծովային լողացումներ սկսվեցին:

ՊԵՆՉԱ: Գիւղացուստական աճուրդային ցուցահանդէսը բացվեց: Անանապահութեան բաժինը կը բացվի յունիսի 20-ին:

ԼԱՅԼԷՆ: Լուրէ, որ հէնց նոր եկաւ այստեղ, մի քանի ճառ արտասանեց, որոնց մէջ պնդում էր, թէ երբէք չէ կարող անտագոնիզմ լինել զօրքի եւ հանրապետութեան միջեւ, Ֆրանսիան միակերպ նուիրված է զօրքին եւ հանրապետութեան:

ԿԱՆԷՍԱ: Բոլոր քրիստոնեայ պատգամաւորները ազգային ժողովին առաջարկեցին շնորհակալութեան յայտնել պետութիւններին Կրետէն թիւրքերի տիրապետութիւնից ազատելու համար եւ խնդրել, որ կղզին միացնեն Յունաստանին: Մասնաւորապէս պատգամաւորները ջնքաբէն բողոքում էին, այնպէս որ ազգային ժողովի նիստը ընդհատվեց:

ԼՕՆԴՈՆ: Ստանդերտօնից հաղորդում են, թէ գնեցեալ Տօքիա Սմիթ եւ Լուի Բօտայի քարտուղար Դէվիտ այս առաւօտ ժամանեցին այստեղ. ոչինչ չէ լսվում նրանց գալուստի նպատակների մասին:

ԼՕՆԴՈՆ: Առաւօտեան լրագրիչներին գրում են Պէկիւնից, որ չինական նահանգապետները խորհրդակցում են եւրօպական վարչական օրգանների հետ Պէկիւնի վարչութիւնը չինացիներին յանձնելու մասին: Նրանք ցանկութիւն են յայտնում, որ օտարազգի զինուորները մնան Պէկիւնում, որպէս ոստիկանական զօրքեր, մինչեւ որ քաղաքը մտնի չինական զօրքերը:

ՄԱԴՐԻԴ: Ընտրութիւնների հետեւանքները սենատում. ազատամիտներ ընտրված են 117, պահպանողականներ—56, տէտուանիստներ—7, զամագոնիստներ—4, հանրապետականներ—2, բաւկերիստներ—մէկ եւ անկախներ—մէկ: Սեփականութեան թւում ընկան 9 արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ:

ՊԱՐԻՉ: Ձինուորական մինիստրը նախագահում էր ժողովրդական ընթերցանութիւնների

1



Типографія Грузинск. Т--ва. Большая-Вяпеская уд., № 72